

մի անհատ, որ արատաւորաձէ է եղել ուրիշ գործերի մէջ էլ: Իրա համար այդ անհատի կրկնում ենք՝ արատաւորաձէ անհատի կողմնակիցները և ուրիշ չէզոք մարդիկ յանուն արդարութեան Դաշնակցութիւնից պատիւ են պահանջում: Մինչդեռ երբ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան բերան Մարտը Խաստուրի գէպքի առթիւ՝ ոճրագործ, ռուս կառավարութեան գիտակից գործիք, դատարի է յայտարարում ոչ թէ մէկ անհատ, այլ բազմաթիւ անհատներ, չարատաւորաձէ անհատներ, երբ հայ զինակիր խմբի գնդակիրորով նահատակներին «գաւաճան» հրատարակելու լրբութեան աստիճանին է հասնում, և դաւաճանութեան ստուերը նետել է ձգում մարդիկ Դաշնակցութեան վրա... մեր անկողմնակալներին, մեր չէզոքներին արդարագատ բերանները պապանձաւ են մնում... Ինչո՞ւ...:

Եթէ արդարութեան անունով երգող մարտականները ու չէզոքները լուրջ են ընդունել այդ ամբաստանութիւնները և եթէ համաձայնել են յղաձագրի հետ, նրանք պէտք է դաշնակցականներին իբր գաւաճաններ, դաւաղիրներ նկատէին. եթէ լուրջ են ընդունել, բայց բիրտաւ փաստերը (․․․) անբաւարար են զտել համոզելու համար, պէտք է բացատրութիւն պահանջէին. պատույ աստեան կազմէին... Ինչո՞ւ չարին... Եթէ չարին, ուրեմն, ոչ մի կարեւորութիւն չունին Մարտի «ժանր միզագրանքներին», ուրեմն, մեզ հետ միասին ընդունեցին, որ այդ «մերկացումները» ոչ այլ ինչ են, եթէ ոչ բացարձակ վայրահաջութիւններ:

Եթէ այնքան է իջել Մարտի բարոյականը, որ նրա մեղադրանքին ոչ մի կարեւորութիւն չեն տալիս նոյնիսկ իրենք մարտականները, եթէ այդ պաշտօնական բերանը ոչ մի յաւակնութիւն չի ցոյց տալիս «պատուար» լինելու, այն ժամանակ, սասցէք, խնդրենք, ի՞նչ է նշանակում «պատիւ» պահանջել այդ տեսակ մի մարմնի անդամներից «մէկի» համար, այն էլ այնպիսի մի անդամի, որ այդ բոլոր ապականութեանց անօթն ու աղբիւրն է:

Չենք կարծում, որ Պ. Պ. Իսկէնտէրը ու Յակոբեանը և գրանց նմանները մի անգամ միայն մէկ նամակ ստորագրելով իրենց ազգային պարտականութիւնը կատարած համարեն և քաշին ասպարէզից: Իսկ պատիւ չէր բերիլ գրանց բարեխղճութեան և անկողմնակալութեան: Եթէ խառնել են այս խնդրի մէջ, անշուշտ իրենց պարտաւոր պիտի զգան գործը մինչև վերջը տանելու համար ուշագրութեամբ

հետեւիլ՝ իրենց ստորագրած պահանջի առթիւ յայտնաւած բոլոր կարծիքներին և ըստ այնմ ասել իրենց երկրորդ խօսքը: Սպասում ենք:

Իսկ Արփիտրեանի «պատույ» համար Դաշնակցութիւնից աստեան պահանջող մարտականները թող ընդունեն, որ չը գնահատել րոտ արժանւոյն իրենց պաշտօնական բերանի քրանջան ճիգը՝ դատարութիւններ բանալու, ոչ մի կարեւորութիւն չընծայել նրա մեծագործ մերկացումներին, — նշանակում է սեփական ձեռքով քննել և վաւերացնել «Մարտ»ի բարոյականի մասին մեր արձակած դատավճիռը:

Դաշնակցական

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 19 Մայիս

Վերջապէս Օրմանդատէ հանգստացաւ: Անցեալ օր բացաւ խառն ժողովը, շնորհակալիքի և երախտագիտութեան հեղեղ մը դուրս վիժեց իր պլզմ բերնէն Երևուրդի հրէշի հասցէին. Ռացարեց իրեն խոստացուած հայոց ազգին ըրուելիք շնորհները:

Ատ ամէնը ոչինչ, Օրմանդատէ իր կորսնցուցած գահը վերստացաւ, մարը այլևս ա՛խ ու վախով չի պիտի մեմուայ թուրքերէն լեղուով թէ «և» կը մեռնի՛մ, աղիս գործը չի լինցաւ... Կերար, «Լրբալան, ատ քեզ խրատ, ալ չը ցանես կառահատ» ալ «պատճառաբանեալ հրատարականներ» չի տաս:

Հանդարտ նստէ անդդ. դու ստեղծուած ես «էվէթ էֆէնտիմ» ըսելու, առ ու ան լրտեսի ու քեթիպի ստքը լիզելու յարմարութիւնովը միայն, բողոքելը քաջի, իր եսը մուցոյի գործ է: Ճիշդութիւն մը բողոքական չըլլար...:

Իսկ չեն գիտեր թէ ինչո՞ւ կիրակի օրը, հակառակ իր թերթերու մէջ տուած յայտարարութեան՝ Մայր եկեղեցիի շեկաւ նորէն փորձա՞նք մը եղաւ: Տկար էի, չի կրցի մանրամասնութիւնները իմանալ, Ժողովուրդը խըռնուած էր եկեղեցին իր անդուգական պատրիարքի աղբիւր-բերանէն լսելու իր ւարարի մէջ տարած յաղթանակը, բայց Օրման չեկաւ... Հանելուկ մը կայ: Էնք ուղեր խելագատակս յոգնեցնել բացատրութիւններ որոնելով. կոպտեմ, կը տեղեկանամ և եթէ բան մը կայ, հետեւեալ անգամին կը գրեմ:

Արթին ալ ժողովի գայած էր: Ուրեմն սպառնազիր տուող երկու էակներն ալ վերակեցին իրենց պաշտօնները: Հիմա խօսքը «կարմիր կնիքը» սպառնաթուղթին տակ կոխողներուն կը պատկանի:

Ինչպէ՞ս զրիւր չէ, այլ իրապօրծելը:

Ես ալ կուզես օրը հարիւր թուղթ գրեմ, հարիւր միամիտներու, չէզոքներու և այլ կուսակցութեան անդամներու մօտենամ, «հայերու ներկայ տնտեսական անկեալ վիճակը բարձրացնելու» անմիա ծրարիրներ առաջարկեմ... հոս Պօլսոյ մէջ «ոչինչ ընելու» գիւրին ու փճացած գաղափարը քարոզեմ... Ատ ամէնը գիւրին են. բայց գժուարը սպառնազիրք իրագործելը, կնիքը «պատիւը» բարձր պահելն է:

«Կոպտեմք»...

Ռուսաց վերջին նոթան խիստ մեծ մտաւանջութիւն պատճառած է Համիտի: Կը կարծուի որ Համիտ փոշի փչելու համար թեւեւ բան մը ընէ... Եւ ատ ըրածը Օրման իրեն անձին ու հրատարականին վերադրէ:

Եթէ նոյնիսկ ս է գրութիւն երեւայ, ու է շնորհ արուի, անոր ալ կեանքը երեք օր պիտի ըլլայ...:

Գրած էի որ շարժմ երեկոյ պիտի նախարարական խորհուրդ ըլլայ և հայոց «շնորհներ ընելու» համար մազպաթայ պիտի շինուի, Համիտի ներկայացուի ստորագրելու: Եւ ատ խորհուրդը եղաւ Մայիս 13ին Երևուրդ՝ որու մէջ Օրմանեան պատրիարքի պահանջները քննութեան տանուեցան:

Արթին ու Օրման կոպտէին որ, զեռեւս անցեալ կիրակի մազպաթային լուրը առնեն և ողորմութիւն մը ըլլայ... Իրենք են միամիտ թէ ամէն հայերը պաշ կը կարծեն: Թուրքը երբ է այդչափ արագ գործ ըրեր... «Ես միշտ յայտն» է ֆէնտիմ... Ու մինչև օրս դեռ ողորմութիւն ու մազպաթայ չի կայ:

ԲԱԺ

ԸՆԿԵՐՈՋՍ ՊՍՏՄԱԾԸ

ԼՈՒՏՈՆՏԻՆԵՐՈՒՆ ԿԵԱՆՔԷՆ

ԵՐԱՋ ԲԱՅ ՏՆՈՒՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ընկերներէս մէկը, անցած օր, տարօրինակ պատմութիւն մը ըրաւ, այնքան ճշմարիտ՝ որքան հետաքրքրաշարժ, որ չահեկանութենէ զուրկ չըլլալուն, իր փոփաքով, պատմած ատեն գրի առի Շարժումի զրկելու համար:

«Ասկէ երկու քուկէս առիս առաջ, ըսաւ ընկերս, կէսօրէ մը վերջ, վրաս արեղ թմրութեան մը յաջորդեց թուս մը. յանկարծ ինքզինքս գտայ բոլորովին անմասնօթ անագին, անհզր քաղքի մը մէջ, որուն հաղա-

րուոր գեղեցիկ շէնքերու փողոցնուրու շրջուցիչ տեսարանը, մըջինի պէս վիտապոզ յայտնաւ, իստոնիճազանճ ամբողջ հիացում կը պատճառէր ինձ: Ամէն քայլափոխիս մէջմէկ նորանոր տեսարաններու կը հանդիպէի, գորս նկարագրիլ զժուար է, ժամ մը չըջնէ յետոյ եզրքները սքանչելի շէնքեր հիւրնկայած գետի մը քով հասայ, որ կարծես իր հիւրերուն շրջուցիչ տեսար հիացումով կը արիէր ու կը սահէր կանցնէր անդադար: Հարցուցի. բսին թէ— Խաչմզն է: Այն հասկացայ թէ ուր էի. սախարի ամենամեծ քաղաքին՝ Լոնստօնի մէջ, Ինչո՞ւ եկած էի, ո՞վ բերած էր զիս. — չգիտէի. միայն ասչափ գրեալի որ, ես էի աննպատակ շրջող և անմասնօթ այս անագին քաղաքին մէջ:

Քանի մը ժամ վերջ, փողոցէ մը անցած պահուս, սոջնէս գնացող չորս անձերու հայերն իստակցութեան ձայնը հասաւ ականջիս. չ'ատ ուրախացայ, գոնէ հայերէ գրկուած չէի: Հետապնդեցի գանտնք մտազբաղ, Ազգակիցներս քանի մը քայլ անդին, գոնէ մը ներս մտած էին արդէն. նս ալ յառաջացայ մինչև հոն, հարցուցի անցորդի մը. — 27 Cherterton road, պատասխանեց: — 27 Cherterton road՝ կրկնեցի մեքենայարար, բայց ինձ ծանօթ է ատ հասցէն: Մարտի և Նոր-Կլեանքի վրայ կարողացած եմ ան, մէկէ աւելի անգամներ. ուրեմն հոս է անոնց խըմբադրատունը, հարցուցի ինքնիրենս: Ենքին դուրը բաց էր արդէն, ներս մտայ, յառաջացայ մինչև փառասոր սրահ մը, ու անկիւն մը առանձնացաւ, առանց սակայն նշմարուած ըլլալու ազգակիցներէս, որոնք ստահին վերի ծայրը բոլորակ գրասեղանի մը շուրջը հաւաքուած էին մտազբաղ:

— Բաւական ուշացաւ, ըսաւ անոնցմէ մէկը, անհասկալութեամբ մը: — Այո՞, ժամագրութիւնը կէս ժամ անցած է, պատասխանեց ուրիշը: Ու նորէն արեւեց լուսութիւնը:

Քանի մը վարկեան յետոյ, սրահին լոռութիւնը խանդաբեցաւ: Գրան բացուելուն աղմուկով, ուրկէ մէկը ներս մտաւ հեւի հեւ, և առանց չորս կողմը նայելու, յառաջացաւ զէպի ընկերները:

— Ներդու թիւն, անակնկալ գործ մը պատահեցաւ, ըսաւ նորեկը միևնոյն ատեն ատեն ատենապետի օձոտին վրայ բազմելով:

— Արդէն ժամանակը ու է, գործի սկիւնք, Պ. Առուկերեան— խօսքը նախագահին ուղղելով— ըսաւ մէկը:

— Այո՞, Պ. Զուրթոյնեան, պատասխանեց նախագահը տաք տաք. — ու զանգակը հնչելով— այսօրուան օրակարգին, շարունակեց ան ժնկլեցիներուն յաւելուածներուն առթիւ լոռնիքը գիրքերնիս որոշել պիտի ըլլայ:

Ես չափազանց հետաքրքրուեցայ: Առուկերեան, Զուրթոյնեան, ինձի ծանօթ անուններ էին. իսկ գործը իմ սիրած ժնկլեցիներու՝ և ինձի ծանօթ յաւելուածներուն չուրջն էր: ուրեմն զիս խիստ չահագողող խնդրի մը լուծման ականատես պիտի ըլլայի: Ուշագրութիւնս սրեցի չափէն աւելի:

Պ. Առուկերեան ատանց ուրիշ խօսք մը ընելու, ոտքի ելաւ: Արդարութեան մէջ տեսնելու բան էր ան: Ուրախութիւն, զայրոյթ, յուզում ամէնքը իրար խառնուած էին և առթի կը փնտուէին կարծես հրաբուխի պէս դուրս պոսթկայուէ: Հրճուանք մը կար իր զէմքին վրայ:

դիւական, կատարի եւ անասնային հրճուանք մը . ցից յոնքեր ունէր, որոնց տակ աղուէսի աչքեր կր փայլէին կայծերիկներու պէս : Փոխուն մազերը փոշ-փոշ տնկուած էին . մօրտ քին ինչիւր բերանը ատոմ կատարար կը կրծէր . իսկ ձեռքը բռնած մաքուր ու ողորկ թուղթի մը պրակները ամենապինդ կերպով կը ճզմէր մատներուն մէջտեղ : Այս ցասկոտ դիրքին մէջ . Պ. Ասուկերեան սկսաւ ճառարտութիւն մը՝ յորում շեշտով եւ բարձր ձայնով . որուն պարունակութիւնը մասաւորապէս հետեւեալն է՝

Տեսարք :

Հոս հաւաքուելուս պատճառը, ինչպէս ըսի քիչ մը առաջ, ժընէվ-ցիներուն յաւելուածին առթիւ մեր բռնելիք դիրքը որոշել պիտի ըլլայ : Բայց օրակարգին չանցած, «կեդրոն»-իս արտասահմանեան քանի մը ասեմուան գործունէութեան վրայ հակիրճ տեսութիւն մը ընել յարմար կը դատեմ . ինչիւր մը՝ որուն դուք ալ ծանօթ էք :

Այն օրէն՝ երբ հայկական ջարդերը պատահեցան, ու հայկական յեղափոխութիւնն ալ պարտութիւն կրեց, ժողովրդին թուրքախորտ մասը այս հարուածին ու ժգնութեանն յուշակորոյս ու յուսահատած, անհաստատ գրութեան մը մատնուելով արտասահման խուժեց հանդիսա գտնելու : «կեդրոն»-իս անդամներն ալ կամաւոր կերպով այդ հոսանքին ենթարկուեցան : Արտասահմանը միզի համար քարոզելու ամենէն յարմարագոյն վայրն էր : «կեդրոն»-իս առաջին քայլին մէջ արդէն յաջողութիւն գտաւ : Ազգին այն ճգնաժամին մէջ հնչակեանութիւնը անձի մը ձեռքին մէջ կը ճզմուէր, զեղծուելու մէջ կը թրպակէր . հարկ էր մաքրել այդ ազատութիւնը : «կեդրոն»-իս անդամներն ուսման անվատ աշխատութեան շնորհիւ, հնչակեանութեան զեկը միահեծանի մը ձանկերէն ազատուեցաւ : Ամենուս յայտնի է թէ, որքան բարոյապէս եւ նիւթապէս նեղ վիճակի մէջ էր «կեդրոն»-իս երբ գործին զեկը իր ձեռքը անցուց : Բայց իր ջանքերով քիչ ժամտնակի մէջ պայտեցի համակիրներու բաւական ստուար թիւ մը իր շուրջը ունեցաւ :

«կեդրոն»-իս արդի կուսակցութիւններէն բոլորովին տարբեր ուղղութեան մը հետեւեցաւ :

Նկատելով որ, ամէն ձախողուած իր հակահարուածը կուսենայ, «կեդրոն»-իս ալ այդ գաղափարը փայտալից : Որպէս զի իր մտադրած գործը առաջ տանէր, պէտք էր անոր առաջին գործը ըլլար հալածել . հարուածել եւ նախատել ժնկվցիները ու տզիկ գոյներով ներկայացնել ժողովրդեան աչքին այդ խմբակը : Եւ իրօք, «կեդրոն»-իս հարուածող յօդուածները իրենց բարբար արգելափակումը ունեցան : Պարագային համաձայն շարժեցաւ «կեդրոն»-իս կապոյտ տեսակէն . եւրոպական կաշառուած թերթերէն . ժնկվցիներուն վրայ պատասխանատուութիւն բեցնող գրութիւններ բնաւ իր աչքէն չի վրիպեցուց, եւ հիւրնակից իր օտկանին մէջ : միջանկեալ կերպով ըսեմ որ, օտար թերթերուն «կեդրոն»-իս հաշտոյն եկած լուրերը գաղտնի հաղորդելու եւ յետոյ անոնցմէ անելով իր թերթին մէջ խորհրդարար զեկուղիւն ալ իրենց բարբար արդիւնքները ունեցան անոր նպատակներուն իրագործման համար :

«կեդրոն»-իս նկատելով որ, եթէ կային իր ուղղութեան յորջ, արդար եւ հաստատաբար հակառակորդներ . ոտասաններն ու անոնց հետեւողները էին, աշխատեցաւ ոտասանայրուսն ու թրքահայերուն մէջ ահադին խրամատ մը բանալու ամէն ճիգ չի խնայել զէթ արտասահմանի մէջ : Աշխատեցաւ Հայաստանի մէջ թուրքին բրած կոտորածներուն պատասխանատուութիւնը ոտասանայրուսն եւ յեղափոխութեան վրայ նեւտել : նկատելով որ, սկզբունքի մասին բացարձակապէս խօսելի դժուար էր, եւ մէջէն դիւրութեամբ կարելի չէ ելնել, անձնականի վերածեց եւ հաճոյքով բացաւ «կեդրոն»-իս օտկանին սիւնակները անձնական խնդիրներու առջեւ : Գանի որ «կեդրոն»-իս անդամներն ուսման անձնական թշնամիները հալածելու նպատակի մաս ընդունեց, ստիպուեցաւ ուրեմն ազնիւ ճանչցուած անձեր ալ անուանարկել, որպէս զի «կեդրոն»-իս անդամներուն ուսման նկատմամբ անոնց խօսելիքներն ու գրելիքները կասկածի տակ զնէր :

Որպէս զի «կեդրոն»-իս ժողովուրդը հեռացնելու կարող ըլլար Գաշակցութեան գիրկէն, եւ խորոքեցէր ժընկվցիներուն գործունէութեան, անիկայ չի բաւականացաւ անոնց գործունէութեան անցեալը խճճելէ . խճճեց եւ ներկան, խճճեց անոնց ծրագիրը, աշխատեցաւ ամէն գործերուն առջեւ արդէն մը դնել, թէ եւ ցաւալի է որ, շատ անգամ ալ սպասուած արդիւնքը չունեցաւ : Համոզուած ըլլալով որ, զինակիր խումբերու բրած կռիւները ակամայ ընդհարումներ էին, «կեդրոն»-իս ջանաց իբր «արշաւանք» ցոյց տալ ամբողջին . իսկ զինակիր խումբերն ալ հրոսակախումբ անուանել, բայց շատ շատեր ալ իր ըմբռնած իմաստով չի ընդունեցան :

Թէ եւ խիստ կերպով քննադատեցին «կեդրոն»-իս ըսելով թէ օր մը զրեց, միւս օր ջրեց . օր մը հակառակեցաւ, ուրիշ օր մը սիրեց, սեղ մը հայտնեց, ուրիշ սեղ մը համբուրեց, սեղ մը գաւաճան գործիք հրօշակեց յեղափոխութիւնը, ուրիշ ինչ մը վիճակէն եւ բռնութեան անխուսափելի եւ միակ ծնունդը, այս ամէնը թէ եւ ըսին, բայց այնպէս գրել կը պահանջէր արդէն «կեդրոն»-իս շահերը, ժամանակը, ամբողջին տրամադրութիւնները, հակումները պէտք էր աչքի առնել ունենալ :

Արտասահմանի միամիտ հայաստանցիները, այդ կենսական ուժերը ժնկվցիներու ձեռքին մէջ գործիք չըլլալու, տեղերնուն չի շարժելու կամ պահ մը յեղափոխական ձգտումներէ ըսոյս տալու համար, «կեդրոն»-իս զանոնք ալ սիրաշահելու կերպը գիտցաւ, անոնց վրայ գուրգուրալ ձեւացուց եւ ըրաւ ինչ որ կարելի էր : Եւ որպէս զի «կեդրոն»-իս հակասակորդները երկրին մէջ իրմէն յեղափոխական սեւէ գործունէութիւն չակնկալեան հիմնական միջոցի մը դիմեց ան, — իր ծրագրին մէջ, առաջին բառով իսկ, վարչական մարմիններու պաշտօնը գծող յօդուածներէ զատ, նպատակ ըսուած բանը չի գրաւ : Բայց այսօր «կեդրոն»-իս արտասահմանի մէջ կրնայ պարծիլ իր մէկ հատիկ գործունէութեան վրայ, որ է համակիր թերթերու շտապներու ջանք չի խնայել :

Ժնկվցիները մինչեւ հիմա տակաւին կը շարունակեն երկրը զննք մտցնելու սխալ եւ վնասակար ուղղութեան հետեւիլ, սակայն միջխառնակն է որ, «կեդրոն»-իս ջանքերուն, զէնք մտցնելը վնասակար համարուելու գաղափարը կը ընդհանրապէս հակառակորդներ, ոտասաններն ու անոնց հետեւողները էին, աշխատեցաւ ոտասանայրուսն ու թրքահայերուն մէջ ահադին խրամատ մը բանալու ամէն ճիգ չի խնայել զէթ արտասահմանի մէջ : Աշխատեցաւ Հայաստանի մէջ թուրքին բրած կոտորածներուն պատասխանատուութիւնը ոտասանայրուսն եւ յեղափոխութեան վրայ նեւտել : նկատելով որ, սկզբունքի մասին բացարձակապէս խօսելի դժուար էր, եւ մէջէն դիւրութեամբ կարելի չէ ելնել, անձնականի վերածեց եւ հաճոյքով բացաւ «կեդրոն»-իս օտկանին սիւնակները անձնական խնդիրներու առջեւ : Գանի որ «կեդրոն»-իս անդամներն ուսման անձնական թշնամիները հալածելու նպատակի մաս ընդունեց, ստիպուեցաւ ուրեմն ազնիւ ճանչցուած անձեր ալ անուանարկել, որպէս զի «կեդրոն»-իս անդամներուն ուսման նկատմամբ անոնց խօսելիքներն ու գրելիքները կասկածի տակ զնէր :

րուն, զէնք մտցնելը վնասակար համարուելու գաղափարը կը ընդհանրապէս հակառակորդներ, ոտասաններն ու անոնց հետեւողները էին, աշխատեցաւ ոտասանայրուսն ու թրքահայերուն մէջ ահադին խրամատ մը բանալու ամէն ճիգ չի խնայել զէթ արտասահմանի մէջ : Աշխատեցաւ Հայաստանի մէջ թուրքին բրած կոտորածներուն պատասխանատուութիւնը ոտասանայրուսն եւ յեղափոխութեան վրայ նեւտել : նկատելով որ, սկզբունքի մասին բացարձակապէս խօսելի դժուար էր, եւ մէջէն դիւրութեամբ կարելի չէ ելնել, անձնականի վերածեց եւ հաճոյքով բացաւ «կեդրոն»-իս օտկանին սիւնակները անձնական խնդիրներու առջեւ : Գանի որ «կեդրոն»-իս անդամներն ուսման անձնական թշնամիները հալածելու նպատակի մաս ընդունեց, ստիպուեցաւ ուրեմն ազնիւ ճանչցուած անձեր ալ անուանարկել, որպէս զի «կեդրոն»-իս անդամներուն ուսման նկատմամբ անոնց խօսելիքներն ու գրելիքները կասկածի տակ զնէր :

Այսպէս թէ այնպէս, Տեսարք «կեդրոն»-իս գործեց արտասահմանի մէջ, այն, եւ բաւական խոհեմութեամբ գործեց : Մեր մէջէն ո՞վ չի խոտովանիր թէ այսօր մեր շուրջը ունինք արտասահմանի պայտեցի հանգիստներն մտածող մեծատուններուն մէկ մասը, ինչպէս նաեւ Պօլիս գտնուողներն ալ :

Չեմ կրնար լուս անցնիլ այն գործունէութիւններուն համար, որոնք աւելի նպատակ ունէին «կեդրոն»-իս համակիրներուն ցոյց տալու թէ ան ալ կը գործէ, եւ միւսնոյն աստեւ համոզուած ըլլալով որ, հասարակ ժողովուրդը միշտ գործողին ետեւէն կերթայ, անոր կաշակցի, վախալով թէ մի գուցէ արտասահման գտնուող հայ ժողովուրդը ամբողջապէս ժնկվցիներուն յարի, հաստատ գիտնալով նաեւ որ ժնկվցիները «կեդրոն»-իս հետ չեն միանար իմ անձա պատճառ բռնելով ուստի ուզեց ժողովուրդը բանով մը զբաղեցնել կամ հրապուրել եւ ժնկվցիներուն գործունէութիւնն ալ կասեցնել մասամբ :

ԱՆՈՒՇԱՒԱՅ,

(ՄԱՍՏԱՏՐ յԱՅՐԵՂՈՎ)

Մ Ե Ծ Մ Ա Ր Գ Ա Ս Պ Ա Ն Ի
Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Վ Ա Ն Փ Ա Ս Ս Ա Մ Ա Ն Ի Ն

Վերջապէս . . . քու վերջին վեց տարուայ լեւետարանի ճըմարիտ հետեւողի մը համբերատար ու անբասիր վարքը, մեծ աթէնացի առաքելի Արիսթիտի նման հայրենասնուէր յատկութիւններու վրայ անդրադուրի մնալը, որոնց համար հալածուեցար, յարգանքի ու գնահատումի արժանի են : Բայց ապերախտ սերունդը փոխանակ զքեզ վարձատրելու, տարիներով քու անգին անձը նշաւակ ըրած էր ամենավարձաշահ անարգանքի տարափններուն :

Ներողամիտ իմաստուններու վեհ օրինակներուն հետեւելով քեզ լքեալ զո՞ն մը իսկ չէիր նկատեր . մենք յեղափոխութեան առաջին Մարտիբոսին վայելող ակնածանքով կը վերաբերինք քեզի : Սէնքեիշ որ քրիստոնէութեան առաջին առաքեալներուն գափինիներ նուիրեց՝ քեզի աւելի վեհագոյնը պիտի ձօնէր, եթէ զքեզ ճանչնար :

Չունգակ մը ձեռքդ առնելով արդարութեան ժամը փոխադրուցիր եւ առանց սրտի խայթի մը թէմիտա գիցուհուն յաղթական թիւերուս վրայ բազմելու կը

խորխտաս որ ոտատրոփ հարուածով մը փչրես այս նողկալի, ազգադաւ ամբաստանութիւններու ծանրութիւնը :

Անխրաւութեան հալածեալ անմղութիւնալը զինուած՝ մարտի խիզճով, Մէմփիսի պատգամէն աւելի զօրաւոր եւ հերքիչ ձայնով մը արդարութիւնը քեզ պաշտպան կանչելով, քեզի դէմ վճռուածը, վկայուածը . . . եւ հաստատուածը, զրպարտութիւն կեղծարարութիւն եւ ստութիւն կոչելու օրինակելի քաջութիւնը ունեցար :

Երանի թէ, ինչպէս որ դու հաւատացած ես, ամբողջ հայութիւնն ալ ապահովցնելիք այդ բեկեալ ճշմարտութեանը մէջ : Բայց ի՞նչ պիտի ընես այդ հայադաւ սեւ սրտիդ արծարծուած բուխը, որ արատաւոր անցեալիդ մէջ, իսլամական մարգարէի տախտակին վրայ հաւատարմութեան երդումը տուաւ . ի՞նչպէս պիտի թագցնես կաշառատենչ ու կեղծ ողբոյդ ձգտումները եւ սիլվախառն ու լպռածեփ բազմայարկ նկարագրիկ կաղապարները որոնք Սասանյոյի բազարին վրայ նեխած լիմոններու գինը ունեցած են : Ի՞նչպէս պիտի կրնաս ոչնչացնել առջի կեանքիդ ու ներկայ գործունէութեանդ սեւագրութիւնը՝ որոնք արդարութեան դիւանատունը խնամքով կը պահուին :

Իրողութիւնները քրտինիլակի պէս տոպրակի մէջ չեն պարտըլուիր : Տեղափոխուեցար . . . որ հոն նոր հոգով ու նոր մարմնով վերակալմուխ, որուն յաջողեցար կերպով մը . Լօնտօնի բանտային դատախօսութիւններու յաճախելով՝ «անուղղակ» եղեռնագործներու պաշտպանողական ճառերը լաւ սերտեցիր, որ ընդհանրապէս կուտայ գրուած քիչ ձեւն ու յատազիծը, փոխանակ ներում խնդրելու իբրեւ կեղծարար ամբաստանել գատաւորները :

Սօղոնի բերնով կը խօսիս թէ՛ սխալները ինքնաբերաբար ճանչնալը իմաստութիւն է . եթէ այդպէս է, ատոնք դարմանելու ի՞նչ երաշխատութիւն տուած ես մինչեւ հիմա :

Բնաւ տրտմառիթ երեւոյթ մի նկատեր, որովհետեւ այդ կապութեան ստեղծումին մղում տուողը ու այդ տխուր նախաձեռնութիւնը քեզմէ ծնունդ առաւ . յեղափոխութեան դէմ խաչակրած արշաւանքի արարիչը ու սկզբնապատճառը դու եղար, յեղափոխութեան բարոյականի ախոյեան կանգնելու ոչ միայն անկարողութիւնը ու աններելի սխալը դու գործեցիր, այլ եւ այդ սկզբունքին ու գաղափարին դաւեցիր : Յեղափոխութեան բարոյապէս մարտի միջնորդութիւն կանման առաջին թուանոր բացելները դու նետեցիր եւ իբր

համբաւաւոր հրապարակագիր անկման առաջին հանդիսաւոր քայլը ընողը դու եղար: Խնկարկու եղար բռնաւորին, անոր արիննոս քղանցքը համբուրելու ստորնացար և պարտաւոր հարկ դրիր որ ազգն ալ այդ շաւիղով երթայ:

Գործածող ոճիւր մըն էր. Դաշնակցութիւնը ազգային պատուոյն ստորնեցուցիչ արաւը սրբելու համար՝ շամբաստանեց զքեզ, այլ փութաց իր գաշոյնով կուրծքը նախել, որուն ներքեւը Համբուրաբախ սրտիդ զարկերը կօրհնէին և կը փառաբանէին խալիֆան:

Քեզի վիճակուած էր Պլուտոնի արքունիքը մեղաւոր օրերդ քաւել, սակայն Հարօն չը համաձայնեցաւ քեզ իր նաւակի մէջ առնուլ, մինչեւ իսկ Պալանիասի բնակած ներքնազաւթը տանելու:

Դժոխքը իր դռները փակեց քեզի դէմ, ու զքեզ թողուց որ Արհիմանի ոգիին պէս թափառիս Դուն ալ աստանդական, քեզի անձաւ մը գտար... այդ յաւէտ մշուշի մէջ ընկզմած ոստանի մէջ խեղդուելու շափ անհանգիստ կերեւաս: Ի՞նչ թախիծ ու խոր մտածումներ են որ զքեզ կը տանջեն:

Մանու, երբ ծնար, երկնային իմաստութեան շունչը փչեց քեզի... Օրօրօցիդ շուրջը մոզերն ու քուրմերն էին և քեզի յանձնածնեցին «եօթր իմաստնոց» գաղտնի գիտութիւնը ու Բամայանիի գիւցաղներգութիւնները սրբագրելու Աստուածային գրիչը: Դիտութեան բոլոր ջախջախիչ գէնքերը ձեռք են: Ի՞նչ պէտք ունիս պաշտպաններու, որոնց անհատնում հրահանգներ կուտաս և որոնք քու հլու ստորագաստալներդ են և զսպասանակէ մը շարժուածի մը պէս սաքի վրայ են ու շունէն աւելի հաւատարիմ քեզի: հեռախօսի կոճակը ձեռքիդ տակ է նորանոր կարգադրութիւններու համար...

Անոնք զքեզ իբրև հայ գրականութեան նախահայրը կը պաշտեն. և այս դառն, երկրորդ Բաբելոնեան զերութեանդ մէջ իսկ, բոլոր վտարանդի «մահալէպիի» և «իլիֆէրի» ջերմեռանդ պաշտողները օրհնութեամբ կը յիշեն քու «ճանճափայլ» անունդ:

Նայէ չորսդիդ, ամբողջ քու ժողովրդիդ ձայնն է որ հեղեղի պէս կը գոռայ, հոս հոն. Ի Բարիկ, Օտէնի հրապարակին վրայ եկեղեցեաց գիւցուհայն քնարը ձեռքը՝ անարժան գողթան երգիչ մը քու Աստուածային տաղանդը կերգէ, քու հաւատարիմ լաքէյըդ այդ Արշակուկը, որ պատանեակութեան միջոցին սալօններ ու կոմսուհիներ տեսնալու աւնուրջներու յետեւէ կը վազէր, հիմակ այդ հրաշալեաց քաղաքի

հմայքներովը արբած՝ «լուբանա-ոխումքներու մէջ կը լողայ որ Աֆրօզ իսէի ճակատը մուսայից ծաղկեփունջովը պննազարգէ. ինքը ժամագրավայրէ արեւելքի ու արեւմուտքի միջեւ, հոստական շովէնիզմը ֆրանսականին յարմարցնելու կը ձգտի...

Եանքիներու երկիրը, Պիթիի գործարանը որ դրօշ պարզած է մաքուր յեղափոխական տարր հաւաքելու, հազիւ կը գրիմարէ ու թեղ հոսանքին. «խախտ» և պիսկապօր անկարող է զայն վարել, զօրաւոր օժանդակի պէտքը կը զգայուի, կաթոյլիկոսին հրամայեցիր Արսէն Թուրումպաճեան որ Սկիւտարի գօվուչէն «քաջալաւ» վկայականը ստացած է, Լօրէնս մեկնի որուն շատ մը քաջութիւններ կը վերագրուին Մարիցայի ափերը վաստկած ճակատամարտէն ուր Թիլլպէի ամենաընտրեալ երիտասարդութիւնը՝ «քուրմարճիներ» և... յանուն հաւատի անոր դրօշի տակ իրենց արիւնը գրին: Այդ փառապանծ անցեալի պարտուր հիմակ Միսիօպիի ափերը պիտի վայելէ ու իր «խաչատուրը» քու անձիդ համար պիտի գործածէ...

Մի ուրիշը... Արէօրակի ճիւղաններէն փախած՝ Միջերկրականի մի ծոցը սլքուած՝ խաչագողներու և խաբէրաններու Դէնպեալը որ ազգային «ֆօնտեր» հալեցնելու արհեստը կատարելագործած է, ոչ նուազ հոգ պատճառած է քեզի իր խառնութեամբ կեցողը, Իմաստունդ մեծ, ատոր պատճառը քեզի տեղեկագրեմ, արձակուրդ ունի. որքան մեծ հաճոյք պիտի ըլլայ՝ եթէ տարտարուսէն գեւ մը իրեն յախտեանկան արձակուրդի հրամանը բերած ըլլար, ճանաչան քոյրերու հետ իր երկնային վարձատրութեանը արժանանալու:

Իսկ աւելի աչքի զարնողը «Իմիֆրեզհի ու Հուգուգի» այն ողորմելի հետեւորդն է որ Հաֆըզի քերական մը ձեռքը՝ իր մէտրէսեական կրթութեան բոլոր հմտութիւնը ի գործ կածէ: Ինտուիպ հնդկահաւի գատողութիւնները հիացում պատճառած են Պալքանեան երկիրներու մէջ, աւելի ծաղրածուի դերեր կը կատարէ, քան խմբագրի. աս ալ եազմայի խանութը գոցեց ու ցեխ արագրելու գործարանը շինեց...

Ասոնք են քո ժողովուրդիդ ձայնը պատկերացնողները, և ասոնք են որ զքեզ պաշտպանելու համար ընդհանուր կոկոնց մը բարձրացուցած են:

Բոլորն ալ անխափ «անկողմնակալ» «ոչ կուտակցական» և արդարութեան ու յեղափոխութեան շատագով:

Յեղափոխական կազմակերպութեան մը նշանակութիւնը այնքան արժէք ունի իրենց աչքին, որ չափ որ եազմայի կամ մի ու

րիչ շահասիրական ընկերակցութիւններու շահը:

Ով իմաստունդ մեծ, եթէ աս է քու ժողովուրդը, որ սրինակելի հլութեամբ՝ մէկ սիրտ, մէկ հոգի եղած կատարեց իր պարտականութիւնը և ի մի ձայն գոռաց, գիտցիր որ աւելի ստուար ժողովուրդ մը կայ, որ յեղափոխութեան դրօշի ներքեւն է, որը աւելի բաղմամբ է և աւելի զօրաւոր ձայնով:

Եթէ պատուոյ տանան կուզես, ատ արդէն վազուց իջվումս է, Սիփանայ գագաթը... ուր ժիրայրի, Պետոյի, Բաբէլէններու և Աւետիսեաններու վրէժխնդիր ոգիները անպատուած Արեան արգար աղաղակովը մահ դաւաճանին կը պոռան... հոն է հրաբուրած Արարատեան Սանդարամէտը՝ հրէշնէրու զսպիչը, անգութ Գրող աստուածը որ ամենակատարի կերպով կամբաստանէ ու կը սաստէ յեղափոխութիւնը, մինչեւ հիմա իր պահանջած անգունալի զոհը կենդանի ձգած ըլլալուն համար և ինքը ձեռնամուխ պիտի ըլլայ իր պաշտօնը կատարելու...

Թ. Գ. Ա. Կ. Ե.

Սօֆիա, 20 Մայիս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 17ին Պոլսէն իր հեռագրերն թէ՛ ուսական դեպատուներ կը շարունակէ և ունեցուն կերպով բողբեկ Ռուս-Թրքական սահմանի գաւառներու հայերու գէշ վիճակին և աղաւթի թեւեղութիւն չի լինելուն համար: Ռուս դեպատուատան կառավարիչը Եպարթոսի և ներքին գործոց նախարարին յայտարարած է թէ հրաժեշտ է: Ռուսիոյ այս նոր ընթացքը կապալուցանէ թէ ուս քաղաքականութիւնը դէպի հայերը փոխուած է: Ռուսական նօթան կը յայտարարէ որ եթէ բարձրագոյն դուռը վերջ չընէ այդ ախուր վիճակին, ինքը Ռուսիան ախպուած պիտի ըլլայ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուլ:

Սալլպուրին ճառի մը մէջ յայտարարած է թէ՛ Անդրիա երբէք յանձնառու չէ եղած որ պատերազմը նորէն կրկնուի: Անդրիա պիտի աշխատի այնպիսի մի հաշտութիւն կայացնել, որ Հարաւային Ափրիկէի բոլոր պետութիւնները, իբր Իրիտանական կայսրութեան անդամները՝ երջանիկ ապրին:

Օրանժը արդէն Անգլիոյ կայսրութեան կցուած յայտարարուած է պաշտօնապէս, Բիւլմէնֆօնթէնի մէջ: Օրանժցիները գոհութեամբ ընդունած են այդ յայտարարութիւնը:

— Իւօհաննէսպուրդ և Բրէտո-

րիա ալ առնուած են: Ոմանք կրան թէ Գրիկէր փախած է, լուրեր կան թէ գիրի բռնուած է:

— Ֆրանսական պատերազմական նախարար Գալիֆիէ հրահանգութեան պատճառով իր հրաժարականը տուած է:

— Մակեդոնական Բարձ. Գոմիթի պաշտօնական օրգան «Բէֆօրմի մէ» «Դրօշակոյ խմբագրութեան» «Լէֆֆօր» թերթին զրկուած նամակի պոլկարերէն թարգմանութիւնը կայ:

Ա. Զ. Դ.

Ընթերցարանի դատարանութիւններն սկսած են. ուսանիլ փափաքողները կարող են միշտ երթալ հսկող պաշտօնեային քով արձանագրուիլ:

Պուլկարերէն և ֆրանսերէն լեզուներով կը թարգմանուին և կը գրուին փոքրիկ փոխարժէքով ամէն տեսակ նամակներ և գրութիւններ Վառնայի ընթերցարանի մէջ:

Մ. Զ. ի հրատարակած Հովասուն և Թոթովմուր անուն գրքերը կը հասոյթը նուիրած է հեղինակը տեղւոյս ընթերցարանին:

Կը ծախուին Վառնայի ընթերցարանին մէջ:

Ընթերցարանը Չորեքշաբթի օրերը յատկացուած է կիներու:

Հ. Ս. Էֆրիկեան

Բնաշխարհիկ բառարան 1900 Վեներիկ Ս. Ղազար, Լոյս տեսած է այս ընդարձակ գործին առաջին քսանութիւններէն պարակն, որ կը բաղկանայ 160 երկխիւն էջերէ և զարդարուած է 80ի շափ խնամատիպ պատկերներով, կը պարուենակէ մեր երկրի նահանգաց, գաւառներու, քաղաքներու, վանքերու, գիւղերու, գետերու, լեռներու և այլ նշանաւոր տեղանոց վրայ, աշխարհագրական, պատմական, հնախօսական և այլ կարեւոր օգտակար տեղեկութիւններ: Առաջին պրակի գինն է ճանապարհի ծախքով 3 ֆրանք կանխիկ, Հասցէ՝

direction de l'Imprimerie arménienne St. Lazare Vesnie

Ա. Զ. Դ.

Շարժումի խմբագրութեան մէջ կարելի է բաժանորդ գրուիլ ֆարիկ հրատարակուող «Հայկական ժողովրդական երգերի հաւաքածոյին»:

Պուլկարի համար պայմանները՝ Տարեկան 6 գրիք 32 ֆրանք կարելի է մաս մաս վճարել:

Ա. գրիքը տասնալուսն 12 ֆրանք Բ. գրիքը տասնալուսն 10 ֆրանք Գ. գրիքը տասնալուսն 10 ֆրանք Ամէն մէկ գրիքը առանձին 6 ֆրանք

Печатня: а „Взаимность“ Вар а